



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ

Medi-Cal և Medicare ստացողների հիվանդանոցից դուրս գրվելու իրավունքները

Յունվար 2018, հրապ. #7139.10

Այս հրապարակման մեջ բացատրվում են Ձեր իրավունքները՝ որպես Medi-Cal կամ Medicare ստացող, երբ դուրս եք գրվում տուն կամ մեկ այլ հաստատություն գնալու համար:

1) Հիվանդանոցը ցանկանում է ինձ դուրս գրել, բայց ես պատրաստ չեմ գնալու:

Ի՞նչ կարող եմ անել՝ հիվանդանոցում ավելի երկար մնալու համար:

Դուք կարող եք հիվանդանոցից դուրս գրվելու պլանավորման գնահատում խնդրել: Հիվանդանոցից դուրս գրվելու պլանավորման գնահատումը կատարվում է հիվանդանոցի կողմից՝ պարզելու, թե արդյոք Դուք դուրս գրվելու ծրագրի կարիք ունեք: Հիվանդանոցները պետք է գնահատում կատարեն, եթե հիվանդը այն խնդրում է:¹

Եթե գնահատումը ցույց տա, որ Դուք դուրս գրման ծրագրի կարիք ունեք, հիվանդանոցը պետք է մշակի այն:² Դուրս գրման ծրագիրը պետք է առանց բարդությունների ապաքինում երաշխավորի, ինչպես նաև կանխի կրկին հիվանդանոցում հայտնվելը՝ գտնելով և կարգավորելով ցանկացած ծառայություն, որի կարիքը կունենաք դուրս գրվելու:

¹ 42 CFR. § 482.43(b)(1) ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

² 42 C.F.R. § 482.43(c)(1) ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

ժամանակ:³ Անհրաժեշտության դեպքում դուրս գրվելու ծրագիրը նաև պետք է ներառի «տնային առողջապահական գործակալությունների կամ [որակավորված ծերանոցների] ցանկ, որոնք մատչելի կլինեն Ձեզ ,և որոնք մասնակցում են Medicare [կամ Medi-Cal] ծրագրին և որոնք ծառայում կամ գտնվում են [Ձեր] աշխարհագրական տարածքում»:⁴

Եթե Դուք տարածաշրջանային կենտրոնի սպասառու եք, Տարածաշրջանային կենտրոնը պետք է գործի կառավարման նպատակային ծառայություններ տրամադրի: Սա նշանակում է, որ Տարածաշրջանային կենտրոնը պետք է «աջակցի [Ձեզ]՝ հիվանդանոցային կարգավիճակից ամբուլատորի փոխադրվելու և կարգավորի համապատասխան ծառայությունն այն անձի համար, ով դուրս է գրվում»:⁵ Տարածաշրջանային կենտրոնը պատասխանատու է դուրս գրվելու պլանավորման համար՝ նախքան դուրս գրվելու օրը մինչև 180 օր առաջ այն կատարելու համար: Երբ Դուք դուրս գրման պլանավորում ինդրեք, պետք է ներառեք Տարածաշրջանային կենտրոնի Ձեր բուժքրոջը կամ բժշկին և Տարածաշրջանային կենտրոնի բուժքրոջը կամ բժշկին ինդրեք ներկա լինել Ձեր դուրս գրման պլանավորման հանդիպմանը:

Եթե Դուք դուրս եք գրվում մեկ այլ հաստատություն գնալու համար, կարող եք ինդրել այցելել այն որակավորված ծերանոցը, որտեղ հիվանդանոցը պլանավորում է Ձեզ դուրս գրել: Երբ Դուք կամ Ձեր անձնական ներկայացուցիչն այցելի այդ հաստատությունը, բացատրեք Ձեր առողջապահական խնամքի կարիքները և հարցրեք, թե արդյոք հաստատությունը կարող է ամբողջովին հոգալ Ձեր խնամքը:

³ «Հիվանդանոցից դուրս գրվելու պլանավորում». «Ընտանիքների և խնամք տրամադրողների համար նախատեսված ուղեցույց», որը մատչելի է՝ [Hospital Discharge Planning: Ընտանիքների և խնամք տրամադրողների համար նախատեսված ուղեցույց \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁴ 42 C.F.R. § 482.43(c)(6) ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

⁵ Կալիֆորնիայի Medicaid նահանգային ծրագիր, հավելված 3.1-A-ի լրացում 1, բաժին 10.D՝ փոփոխված ըստ նահանգային ծրագրի, փոփոխություն 005-001, հաստատված՝ 3-14-05: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Եթե նշված հաստատությունը չի կարող ամբողջովին հոգալ Ձեր խնամքը, ապա Դուք կամ Ձեր անձնական ներկայացուցիչը պետք է անմիջապես դիմեք հիվանդանոցին: Հիվանդանոցի գործի կառավարչին պատմեք, որ առաջարկվող հաստատությունները համապատասխան չեն, և որ Դուք դեմ եք նման հաստատություններ փոխադրելու ցանկացած դուրսգրմանը:

2) Հիվանդանոցից դուրս գրվելու համար Գործողությունների ծանուցում կատանա՞մ:

Հիվանդանոցն ստիպված չէ հիվանդանոցից սպասվող դուրս գրման համար Գործողությունների ծանուցում տրամադրել: Եթե բուժող բժիշկը դուրս գրման հրաման է ստորագրել, դա նշանակում է, որ Ձեզ բուժող բժիշկը վստահ է, որ Դուք այլևս ինտենսիվ խնամքի կարիք չունեք: Հիվանդանոցը միայն պետք է Ձեզ կամ Ձեր ընտանիքի խնամքի ներկայացուցչին տեղեկացնի, երբ դուրս գրման հրամանը տրվի , և երբ եք Դուք դուրս գրվելու:⁶ Թեև հիվանդանոցները կարող են տարբեր գործակելակերպեր ունենալ, Medi-Cal-ը/Medicare-ը/հիվանդանոցը ստիպված չեն Ձեզ կամ Ձեր ներկայացուցչին գրավոր ծանուցում տրամադրել դուրսգրման վերաբերյալ:

3) Ինչպե՞ս կարող եմ բողոքել հիվանդանոցից դուրսգրման համար:

Եթե Դուք վճարում եք Medi-Cal-ից ծառայություն ստանալու համար և վստահ եք, որ Medi-Cal-ը սխալվել է՝ փորձելով Ձեզ դուրս գրել, կարող եք նահանգային արդար լսում խնդրել:⁷ Դուք չեք կարող բողոքել վճարվող օգնության առկախմամբ, եթե բժիշկը լրացուցիչ ինտենսիվ խնամք չի խնդրել, որոնք Medi-Cal-ը մերժել է:⁸ Ի նկատի ունեցեք, որ Ձեր բողոքը կարող է հաջող ավարտ չունենա, եթե հիվանդանոցի մատակարարը ինտենսիվ ծառայություններ չառաջարկի:

Եթե Դուք Medi-Cal-ի Կառավարվող խնամքի ծրագիր (Managed Care Plan) ունեք, հիվանդանոցի դուրս գրելը «նպաստ ստանալու անբարենպաստ որոշում» (ABD) չէ, որը կարող եք բողոքարկել:

⁶ H.S.C. § 1262.5(d). ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

⁷ 42 CFR § 431.220(a)(1) ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

⁸ 42 CFR § 431.206(b)(1)-(4) ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Սակայն, Դուք կարող եք Կառավարվող խնամքի ծրագրից (MCP) մի քանի ավելի օր խնդրել: Եթե Ձեր խնդրանքը մերժվի, սա կարող է ABD համարվել:⁹ Այդ դեպքում Դուք պետք է հետևեք MCP-ի ներքին բողոքների և գանգատների գործընթացին:¹⁰ Ըստ օրենքի հստակ չէ, թե բողոքների և գանգատների գործընթացը կիրառվում է այստեղ, բայց կարող եք փորձել:

4) Եթե բողոքարկման ժամանակ մնամ հիվանդանոցում, ես ստիպվա՞ծ եմ վճարել հիվանդանոցում մնալու համար:

Եթե Դուք Medi-Cal-ի ծառայության դիմաց վճարման ծրագրում եք և բժիշկը լրացուցիչ ինտենսիվ ծառայություններ չի խնդրել, երբ հիվանդանոցն ասել է, որ Դուք պետք է դուրս գրվեք, ապա հավանական է, որ Դուք պատասխանատու կլինեք հիվանդանոցում մնալու համար, եթե բողոքարկման ընթացքում մնացք հիվանդանոցում, որովհետև Դուք չեք կարող բողոքարկել վճարվող աջակցության առկախմամբ:¹¹

Այն մարդկանց համար, ովքեր MCP-ում են, հստակ չէ, թե արդյոք Դուք կարող եք բողոքարկել վճարվող աջակցության առկախմամբ:

⁹ 42 CFR § 438.400(b) ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁰ Տե՛ս DRC-ի «Medi-Cal-ի կողմից կառավարվող խնամքի բողոքարկումները և գանգատները» հրապարակումը, որը մատչելի է՝ Մատչելի է՝ [Medi-Cal-ի կառավարվող խնամք՝ Գանգատներ և բողոքներ](#); Տե՛ս նաև APL 17-006, մատչելի է՝ [DHC-ի ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՁՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՁԵՎԱՆՄՈՒԾՆԵՐԸ ԵՎ «ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ» ՅԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ. \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹¹Վճարվող աջակցության առկախում թույլատրվում է, երբ 10 կամ 5 օրվա նախապես ծանուցում է պահանջվում: 42 ԴԱՇՆԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՕՐԵՆՍԳԻՐՔ (CFR) §431.230. Նախապես ծանուցում չի պահանջվում, երբ «բժշկական խնամքի մակարդակի փոփոխությունը նշանակված է [Ձեր] բժշկի կողմից»: 42 CFR § 431.230(a). Բժիշկը փոխել է Ձեր բժշկական խնամքի մակարդակը, երբ նա ստորագրել է դուրսգրման հրամանը: See also, 22 C.C.R. § 51014.2(a); MEDI-CAL PROVIDER MANUALS, “TAR Deferral/Denial Policy (Frank v. Kizer),” Inpatient Services (IPS). ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

5) Ի՞նչ ծառայություններից կարող եմ օգտվել դուրս գրվելուց հետո:

Եթե դուք ներկա պահին հոսպիտալացված եք, մտածեք «Տանը և համայնքում հիմնված այլընտրանքային հրաժարման» մասին: Տե՛ս Disability Rights California-ի հրապարակում # 5591.01-ը՝ հավելյալ տեղեկություններ ստանալու համար:¹² Սա սովորաբար երկար սպասվող ցանկ է՝ Հրաժարման մեջ ընդգրկվելու համար: Եթե Դուք այսպահին հիվանդանոցում եք և հրաժարման կարիքն ունեք՝ դուրս գրվելու և տուն գնալու համար, ապա չեք ընդգրկվի այդ սպասողների ցանկում:

Եթե Դուք ապրել եք ստացիոնար ծերանոցում, զարգացման խնդիրներ ունեցող անձանց միջանկյալ խնամքի հաստատությունում կամ ինտենսիվ խնամքի հիվանդանոցի հատուկ բաժնում (DP/NF) ավելի քան 90 օր, բայց դեռ ծառայությունների կարիք ունեք, նման այն ծառայություններին, որոնք ստացել եք հիվանդանոցում անկախ ապրելու համար, Դուք կարող եք Կալիֆորնիայի Համայնքային փոխանցումների (CCT, California Community Transitions) ծրագրի ընդգրկվելու ցանկում գրանցվել: CCT ծրագիրն օգնում է Medi-Cal ունեցող անձանց անհրաժեշտ լրացուցիչ աջակցություն ստանալ՝ բժշկական հաստատությունից տուն փոխադրվելու համար: Որոշ ծառայություններ, որոնք CCT ծրագիրը տրամադրում է, վճարում են տան փոփոխությունների համար, օրինակ՝ աստիճանաճաղեր և թեքահարթակներ կառուցելու կամ գտնելու այնպիսի ծրագրեր, որոնք կօգնեն Ձեզ համայնքում ապրելու համար: Տե՛ս DRC CCT հրապարակում # 5602.01-ը՝ հավելյալ տեղեկություններ ստանալու համար:¹³ Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ այս ծրագիրը 2018թ. հետո կարող է չգործել: Դուք պետք է Ձեր տեղական CCT-ից այնուամենայնիվ ճշտեք, որովհետև ֆինանսավորումը կարող է վերաիմացվել:

¹² Տե՛ս Disability Rights California-ի թիվ 5591.01 հրապարակումը, որը մատչելի է՝ [Տանը և համայնքում հիմնված այլընտրանքների \(HCB այլընտրանքներ\) հրաժարումը \(նախկինում հայտնի էր որպես Ծերանոցի/ինտենսիվ խնամքի հրաժարում\)՝ Հիմունքներ . \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹³ Տե՛ս Disability Rights California-ի թիվ 5602.01 հրապարակումը, որը մատչելի է՝ [Կալիֆորնիայի համայնքային տեղափոխումներ \(CCT\) ծրագիր՝ Ծերանոցի բնակչի համար համայնք վերադառնալու միջոց \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

Տնային աջակցության ծառայությունները (IHSS, In-Home Supportive Services) մեկ այլ ծրագիր է, որը տանը խնամք տրամադրող սպասարկող անձի ծառայություններ է առաջարկում: Եթե հոսպիտալացված ժամանակ դիմեք IHSS-ի համար, IHSS-ը պետք է գնահատի Ձեզ, մինչ Դուք հիվանդանոցում եք, որպեսզի դուրս գրվելուց հետո IHSS ունենաք:¹⁴ IHSS-ի վերաբերյալ հավելյալ տեղեկությունները մատչելի են DRC-ի կայքէջում ([Disability Rights California հրապարկման մեջ՝ Տնային աջակցության ծառայություններ \(In-Home Supportive Services \(IHSS\)\)](#)).

6) Հիվանդանոցը կարո՞ղ է ինձ «փողոց նետել»:

Ոչ, հիվանդանոցները «պետք է հետհիվանդանոցային խնամքի նախապատրաստություններ կատարեն այն հիվանդների համար, ովքեր հավանական է բարդություններ կարել են ունենալ դուրս գրվելուց հետո»:¹⁵

7) Որո՞նք են հիվանդանոցից դուրս գրվելու իրավունքները անտուն հիվանդների համար:

Հիվանդանոցներին արգելվում է խտրական վերաբերմունք դրսևորել անտուն հիվանդների հանդեպ:¹⁶ Հիվանդանոցները պետք է անտուն հիվանդների դուրս գրման գրավոր պլանավորման քաղաքականություն ունենան, որը «կօգնի անտուն հիվանդին պատրաստել վերադառնալու համայնք՝ նրան համայնքային մատչելի ռեսուրսների, բուժման, ապաստարանի և այլ օժանդակ ծառայությունների հետ կապակցելով»:¹⁷ Հիվանդանոցը պետք է «ուղղորդվի անտուն հիվանդի լավագույն

¹⁴ Տե՛ս Disability Rights California-ի թիվ 5239.01 հիրապարակումը: Նաև տե՛ս Բոլոր վարչաշրջանների նամակ թիվ 02-68-ը [Սոցիալական ծառայությունների վարչություն՝ Բողոքների և գանգատների պահանջներ և ծանուցումների վերանայված ձևանմուշներ և «Ձեր իրավունքները» հավելվածները \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹⁵ 42 C.F.R. § 482.43(a). ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁶ H.& S.C. § 1262.5(n)(2). ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁷ H.& S.C. § 1262.5(n)(3). ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

շահերից, նրա ֆիզիկական և մտավոր վիճակից և անտուն հիվանդի տեղավորման նախընտրություններից ելնելով»:¹⁸

Ավելին, անտուն հիվանդը պետք է տեղեկացվի իր մատչելի տեղավորման ընտրանքների մասին: Հիվանդանոցների անտուն հիվանդների դուրսգրման քաղաքականությունը պետք է հիվանդին տրամադրվի նրա կողմից հասկանալի լեզվով:¹⁹

Անտուն հիվանդը կարող է դորս գրվել հետևյալ վայրեր՝²⁰

- Արտոնագրված առողջապահական հաստատություն.
- Սոցիալական ծառայությունների գործակալություն, հասարակական ծառայությունների մատակարար կամ պետական ծառայությունների մատակարար կազմակերպություն այնքան ժամանակ, մինչև որ և՛ հիվանդը և՛ մատակարարը համաձայնեն տեղավորման հարցում.
- Անտուն հիվանդի բնակավայր, որը ներառում է այն տեղանքը, որը անտուն հիվանդը նշում է որպես իր առաջին կացարանի վայր. կամ
- Այլընտրանքային տեղանք՝ անտուն հիվանդի կողմից հայտնաբերված:

Հիվանդանոցը կարող է Ձեզ մեկ այլ վարչաշրջան չուղարկել՝ աջակցող ծառայություններ ստանալու սոցիալական ծառայությունների գործակալությունից, հասարակական կազմակերպություններից կամ առողջապահական խնամքի ծառայությունների մատակարարից՝ առանց այդ գործակալությունից լիազորման ձևաթուղթ բերելու:²¹ Դուրս գրվելուց հետո «Չափահասների պաշտպանության ծառայություններ» փոխադրվելը նույնպես դուրս գրվելու ընդունելի ծրագիր չէ:²²

¹⁸ id. ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁹ H.& S.C. § 1262.5(n)(5). ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁰ H.& S.C. § 1262.5(n)(4)(A-C). ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²¹ H.& S.C. § 1262.4(a). ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²² Տե՛ս Բոլոր վարչաշրջանների տեղեկությունների ծանուցում I-42-18-ը և [Դուրս գրման պլանավորումը](#). ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Յիվանդանոցը նաև պետք է նախքան դուրսգրվելը, հետևյալ մի քանի հարցերի մասին փաստաթղթեր պատրաստի և դրանք տրամադրի անտուն հիվանդի բարեկեցության համար.²³

- Նախքան դուրս գրվելը ճաշ առաջարկվի.
- Եղանակին համապատասխան հագուստ առաջրկվի, եթե հագուստն անհամապատասխան է.
- Դեղատոմս կամ դեղամիջոցներ տրամադրի, եթե դրանք անհրաժեշտ և մատչելի են.
- Տարածքին հատուկ պատվաստումների կամ վարակիչ հիվանդությունների նախնական ստուգում առաջարկի.
- Նախնական ստուգում և անդամագրման աջակցություն մատչելի առողջապահական ապահովագրության ծածկույթում.
- Նախնական ստուգում և ուղղորդում՝ վարքագծային առողջության խնամքի համար, եթե կարիք կա. և
- Փոխադրամիջոցի առաջարկ դուրսգրման տեղանք, որը կամ 30 րոպե ճամփաորդելու ժամանակ է կամ 30 մղոն հեռավորության վրա է գտնվում հիվանդանոցից:

2019թ. հուլիսի 1-ից սկսած, հիվանդանոցները պետք է տարեկան թարմացված «գրավոր ծրագիր ունենան՝ վարչաշրջանի վարքագծային առողջության գործակալության, տարածքի առողջապահական խնամքի և սոցիալական ծառայությունների գործակալությունների և հասարակական սոցիալական ծառայությունների մատակարարների հետ համակարգելու անտուն հիվանդների ծառայությունները և ուղեգրերը», որոնք ներառում են հետևյալը՝²⁴

- «Անտունների կացարանների, ընդունելության ընթացակարգերի, ծառայություն ստացած բնակության թվի և բժշկական ու վարքագծային առողջության մատչելի ծառայությունների ցանկ»,
- Յիվանդանոցային ընթացակարգեր «անտուն հիվանդների հիվանդանոցից դուրսգրման ուղեգրեր ապաստարանային, բժշկական և վարքագծային առողջության խնամքի համար»,
- «Կոնտակտային տվյալներ անտունների ապաստարանների ընդունման համակարգման համար» և

²³ H.& S.C. § 1262.5(o)(1-10). ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁴ H.& S.C. § 1262.5(p)(1-4). ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

- «վերապատրաստման նախագծեր՝ դուրս գրվելը պլանավորող անձնակազմի համար»:

8) Հիվանդանոցի մասին ո՞ւմ կարող եմ բողոքել:

Դուք կարող եք հիվանդի բողոք ներկայացնել հիվանդանոցի դեմ:²⁵

Դուք նաև կարող եք Կալիֆորնիայի հանրային առողջության լիցենզավորման և վկայագրման վարչության գանգատ ներկայացնել Ձեր հիվանդանոցի դեմ: ²⁶

Առանձին որևէ բժշկի դեմ գանգատ ներկայացնելու համար, կարող եք այն ներկայացնել Կալիֆորնիայի բժշկական խորհրդին՝ [Կալիֆորնիայի բժշկական խորհուրդ՝ Գանգատին վերաբերող տեղեկություններ](#)

Որոշ հիվանդանոցներ հավատարմագրվում են Միացյալ Հանձնաժողովի միջոցով: Միացյալ հանձնաժողովը գանգատարկման գործընթաց ունի իր կողմից հավատարմագրված ցանկացած առողջապահական հաստատության դեմ: Ահա հղում դրա կաքեջին՝ հավելյալ տեղեկություններով՝ [Միացյալ Հանձնաժողով՝ Հիվանդի անվտանգությանը վերաբերող դեպքի գեկուցում](#)

Եթե Դուք Medicare եք ստանում, կարող եք Livanta-ին բողոք ներկայացնել (տե՛ս՝ [State of California: Office of the Patient Advocate Medicare Complaints](#))

Եթե Դուք Medi-Cal-ին վճարում եք ծառայության համար, Դուք կարող եք գանգատ ներկայացնել Կալիֆորնիա նահանգի հիվանդների շահերի պաշտպանության գրասենյակ՝ [State of California: Office of the Patient Advocate.](#)

²⁵ Դաշնային կանոնակարգերը հիվանդանոցներից պահանջում են հիվանդի բողոքարկման ընթացակարգեր ունենալ: 42 C.F.R. § 482.13(a)(2) ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁶ Դուք կարող եք դա առցանց անել այստեղ՝ [Բողոք՝ առողջապահական հաստատության/ մատակարարի դեմ. \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

Եթե MCP-ի միջոցով Medi-Cal եք ստանում, ապա կարող եք դիմել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ (առնչություն չունեցող երրորդ կողմ, որը կփորձի լուծել MCP-ի և հիվանդի միջև եղած տարաձայնությունները»: Նրանց մասին տեղեկություններ մատչելի են՝ [Medi-Cal Managed Care and Mental Health Office of the Ombudsman](#)